

Նորությունների թողարկում

“Գործարարություն - 2006”

ԱՊՅ տնտեսությունները հասնում են բարեփոխումների ընթացքին

Վաշինգտոն, սեպտեմբեր 13, 2005թ. – Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) տնտեսություններն ավելացնում են բարեփոխումների ընթացքը, որպեսզի օգնեն փոքր և միջին ձեռնարկություններին ավելի շատ աշխատատեղեր ստեղծել, որտեղ Վրաստանը գլոբալ առաջատար բարեփոխիչներից է: Սակայն տարածաշրջանի բարեփոխիչները հետ են մնում իրենց արևելաեվրոպական հարևաններից և շատ երկրներում ձեռնարկությունների վրա դեռ մնում է ծանր իրավական բեռը՝ համաձայն Համաշխարհային բանկի խմբի նոր զեկույցի:

“Գործարարություն - 2006”/Doing business in 2006/: «Աշխատատեղերի ստեղծում» զեկույցը, համահովանավորված Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի կողմից, որը Համաշխարհային բանկի խմբի մասնավոր ոլորտի մասնաճյուղն է, գտնում է, որ այսպիսի բարեփոխումները, հաճախ լինելով պարզ, կարող են շատ աշխատատեղեր ստեղծել:

«Աշխատատեղերը առաջնահերթային են յուրաքանչյուր երկրի համար, հատկապես ամենաաղքատ երկրների համար: Ավելի շատ աշխատատեղերի ստեղծման և ավելի շատ աճի համար իրավական դաշտի բարելավում և ձեռներեցների օգնությունը առանցքային է: Աղքատության դեմ պայքարը նույնպես կարևոր է: Կանայք, որոնք որոշ երկրներում կազմում են աշխատուժի մինչև երեք քառորդը, ինչպես նաև առաջին անգամ աշխատանք փնտրող երիտասարդները ամենամեծ շահառուները կլինեն: Վերջին տարեհների հաջող բարեփոխիչների բազմազան շրջանակը, Սերբիայից մինչև Ռուանդա, մատնանշում է առաջ տանող ճանապարհ: Նրանց փորձից մեք շատ բան կարող են սովորել», - ասում է Համաշխարհային բանկի խմբի նախագահ Փոլ Վոլֆովիցը:

Տարեկան զեկույցը, որն առաջին անգամ ներկայացնում է հիմնական գործարար կարգավորումների և բարեփոխումների 155 տնտեսությունների գլոբալ դասակարգումը, գտնում է, որ ԱՊՀ յուրաքանչյուր երկրի գործարար միջավայրի առնվազն մեկ ոլորտ է բարելավվել՝ ցանկացած տարածաշրջանի բարեփոխումների ամենաբարձր վարկանիշով: Սակայն բարեփոխումների ընթացքը ավելի դանդաղ է, քան Եվրոմիության նոր անդամները, որոնք ագրեսիվ կերպով խոթանում են ձեռնարկատերերին հեռահար բարեփոխումներին, որոնք հստակեցնում են գործարար կարգավորումները և հարկերը:

Զեկույցը ներկայացնում է ձեռնարկությունների սկսման, գործարկման, առևտրի, հարկերի վճարման և փակման հետ կապված մի շարք կարգավորիչ

ցուցանիշներ՝ չափված կառավարության տարբեր պահանջների հետ կապված ժամանակով և ծախսերով: Այն չի չափում այնպիսի փոփոխականներ, ինչպիսիք են մակրոտնտեսական քաղաքականությունը, ենթակառուցվածքի որակը, արժույթի խոցելիությունը, ներդրողների ընկալումը և հանցագործության աստիճանը:

Վրաստանը տարածաշրջանի առաջատար բարեփոխիչն է և երկրորդը գլոբալ առումով՝ հեշտացնելով ձեռնարկության բացումը, նվազեցնելով լիցենզավորում պահանջող գործունեությունները 909-ից 159, թեթևացնելով կրճատման ենթակա աշխատակիցների աշխատանքից հեռացման ծախսերը, նվազեցնելով սեփականության գրանցման ժամանակն ու ծախսերը և ներդրնելով նոր հարկային օրենք ավելի քիչ և պարզեցված հարկերով:

Վերջին տարում ԱՊՀ երկրներում այլ նկատելի բարեփոխումներ՝

- Ռուսաստանը, Ուկրաինան և Ադրբեջանը ձեռնարկատերերի համար հեշտացրել են ձեռնարկությունների սկսումը: Ռուսաստանի պարագայում երկրորդ անընդմեջ տարին:
- Հայաստանը ներդրել է գործերի վարումը դատարաններում՝ հեշտացնելով պայմանագրերի կիրարկման ընթացքը: Ղազախստանը կրճատել է պայմանագրի ուժի մեջ մտնելուց 20 օր՝ թույլ տալով հաստատված մասնավորեցված ընկերություններին դատարան մտնել գործերով: Բելառուսը հեշտացրել է դատարանների բողոքարկման գործընթացը:
- Հայաստանը ավելացրել է զբաղվածության օրենքի ճկունությունը:
- Ուկրաինան բարելավել է վարկային շուկաների կարգավորումները գրավի մասին նոր օրենքով՝ հնարավորություն տալով ձեռնարկատերերին որպես գրավ ավելի շատ գույքի օգտագործումը և հնարավորություն տալով վարկատուներին առանց երկարատև դատավարությունների կիրառել մասնավոր գրավը: Հիմա վարկատուները գրավի առաջին առաջնահերթությունն ունեն, եթե վարկառուն անհաջողության է մատնվում:
- Ղրղզստանում հիմնադրվել է նոր վարկային բյուրո, որը վարկատուներին հեշտացնում է վարկունակությունը գնահատել: Հանրային վարկային ռեգիստրներ են ստեղծվել Հայաստանում և Ադրբեջանում:
- Ռուսաստանը և Ղազախստանը ներդրել են նոր օրենքներ՝ քաջալերելով վարկային տեղեկատվության փոխանակումը:
- Մոլդովան և Ուզբեկստանը կրճատել են շահութահարկը համապատասխանաբար 3 և 2 տոկոսային միավորներով:

Ընդհանուր առմամբ եվրոպական պետությունները ամենաակտիվ բարեփոխիչներն են: Անցյալ տարվա առաջին 12 բարեփոխիչները ըստ հերթականությամբ հետևյալն են՝ Սերբիա և Մոնտենեգրո, Վրաստան, Վիետնամ, Սլովակիա, Գերմանիա, Եգիպտոս, Ֆինլանդիա, Ռումինիա, Լատվիա, Պակիստան, Ռուանդա և Նիդերլանդներ:

Doing Business in 2006 թարմացնում է անցյալ տարվա գործարար միջավայրի ցուցանիշների յոթ խմբերի անցյալ տարվա հաշվետվությունը՝ ձեռնարկություն

ստեղծումը, աշխատակիցների վարձումը և հեռացումը, պայմանագրերի կիրառումը, գույքի գրանցումը, վարկերի ստացումը, ներդրողների պաշտպանությունը և ձեռնարկությունների փակումը: Այն ընդլայնում է հետազոտությունը մինչև 155 երկիր և ավելացնում է երեք նոր ցուցանիշներ, որոնք վերաբերում է գործարար լիցենզիաներին, միջսահմանային առևտուր և հարկերի վճարում:

Այս տարվա զեկույցի նոր ցուցանիշները ավելի են ամրապնդում բարեփոխումների կարիքը, մասնավորապես աղքատ երկրներում: Ձեկույցում ասվում է, որ աղքատ երկրները ամենաբարձր շահութահարկն են գանձում աշխարհում: Այս բարձր հարկերը խթաններ են ստեղծում խուսափելուց՝ դրդելով շատ ձեռնարկությունների անցնել ընդհատակ և չեն արտացոլվում ավելի բարձր եկամուտներում:

Վերլուծությունը նաև ցույց է տալիս, որ առևտրի բարեփոխումների վարչական ծախսերի բարեփոխումները կարող են վերացնել արտահանման և ներմուծման նկատելի արգելքները: Ի հակառակ ընդունված կարծիքի մաքսային թղթարարությունը և այլ կարմիր ժապավենները (որոնք հաճախ կոչվում են «մեղմ ենթակառուցվածք») արտահանման և ներմուծման հիմնական ձգձգումների պատճառն են: Ձգձգումների մեկ քառորդից կեսը պատճառվում են «կոշտ ենթակառուցվածքների», ինչպիսիք են վատ նավահանգիստները և ճանապարհներ: Օրինակ Ադրբեջանում ձեռնարկատերը պետք է ներկայացնի 18 փաստաթուղթ և ստանա 55 ստորագրություն ապրանք ներմուծելու համար: Ջարգացող երկրների արտադրողների համար առևտրի վարչական արգելքները կարող են ավելի շատ ծախսեր պահանջել, քան սակագներն ու քվոտաները:

Տարեկան հրապարակվող զեկույցը քաղաքականություն ձևավորողներին հնարավորություն է տալիս չափել կարգավորումների կատարողականը՝ այլ երկրների հետ համեմատությամբ, դասեր քաղել գլոբալ լավագույն պրակտիկայից և առաջնահերթացնել բարեփոխումները: Ներկայումս իր երրորդ տարում զեկույցն արդեն ազդեցություն է ունեցել գործարար միջավայրի բարեփոխումների վրա ամբողջ աշխարհում:

«*Doing Business*» հեռանշունը ներշնչել և աջակցել է բարեփոխումները ավելի քան 20 երկրներում և անցյալ տարվանից սկսած ինը կառավարություններ խնդրել են, որ իրենց երկրները ներառվեն «*Doing Business*» վերլուծության մեջ» ասաց զեկույցի հեղինակ Քարալի Մաքլիեշը:

Ըստ հերթականության ամենահեշտ գործարարությամբ զբաղվելու զեկույցի աշխարհի առաջին 30 տնտեսություններն են Նոր Զելանդիան, Սինգապուրը, Միացյալ Նահանգները, Կանադան, Նորվեգիան, Ավստրալիան, Հոնգ Կոնգը/Չինաստան, Դանիան, Միացյալ Թագավորությունը, Ճապոնիան, Իռլանդիան, Իսլանդիան, Ֆինլանդիան, Շվեդիան, Լիտվան, Էստոնիան, Շվեյցարիան, Բելգիան, Գերմանիան, Թայլանդը, Մալազիան, Պուերտո Ռիկոն, Մաուրիտուսը, Նիդեռլանդները, Չիլին, Լատվիան, Կորեան, Հարավային Աֆրիկան, Իսրայելը և Իսպանիան:

Առաջին 30-ակուն բալթյան պետությունների, Լիտվա, Էստոնիա և Լատվիա, դասակարգումը նշանակալից ձեռքբերում է, քանի որ միայն մի տասնամյակ է անցել իրենց բարեփոխումների սկզբից: Բայց դասակարգումը նկատելի արգելքներ է ներկայացնում ԱՊՀ երկրներում, որտեղ Հայաստանը 46-րդ է, Ռուսաստանը՝ 79, Սոլդովան՝ 83, Ղրղզստանը՝ 84, Ղազախստանը՝ 86, Ադրբեջանը՝ 98, Վրաստանը՝ 100, Բելառուսը՝ 106, Ուկրաինան՝ 124 և Ուզբեկստանը՝ 138:

Տարածաշրջանի առանձնահատուկ արգելքներն են զբաղվածության մասին օրենքները և բարձր ու բարդ հարկերը: Օրինակ՝ երկրների 80 տոկոսը պահանջում են, որ կանայք թոշակի անցնեն ավելի շուտ, քան տղամարդիկ: Սա մի կանոն է, որը խանգարում է կանանց աշխատանքային գործունեության հնարավորություններին և աշխատավարձին: Բելառուսում, եթե ձեռնարկությունը վճարի իր բոլոր հարկերը, ապա այն կկազմի համախառն շահույթից ավել և տարեկան կներառի 113 հարկային վճարումներ 3 տարբեր գերատեսչություններ և 1,188 ժամ դա անելու համար: Այսպիսի բարձր հարկերը դրանցից խուսափելու դրդապատճառներ են ստեղծում: Ուզբեկստանում ձեռնարկությանը հարկերի 20 տոկոսից խուսափումը կնեծացնի համախառն շահույթը 60 տոկոսով:

Վերին հորիզոնականներում գտնվող բոլոր երկրները կարգավորում են ձեռնարկատիրությունը, բայց դա նրանք անում են ավելի պակաս ծախսատար և բեռնային ձևով: Հյուսիսային երկրները, որոնցից բոլորը գտնվում են 30-ի ցանկում, չափից քիչ չեն կարգավորում: Փոխարենը նրանք պարզ օրենքներ ունեն, որոնք ձեռնարկություններին հնարավորություն են տալիս լինել արտադրողական և կենտրոնանալ այն միջամտությունների վրա, որոնք հարկի են՝ պաշտպանելով սեփականության իրավունքները և տրամադրելով սոցիալական ծառայություններ:

Հյուսիսային երկրների տնտեսական գործունեության միայն 8 տոկոսն է կատարվում չգրանցված ձևով (ոչ ֆորմալ ոլորտ): Պատճառն այն է, որ օրենքներով աշխատելը պարզ է և ձեռնարկությունները գերազանց պետական ծառայություններ են ստանում իրենց վճարած հարկերի համար: Օրինակ՝ Դանիան ունի աշխարհի լավագույն ենթակառուցվածքները: Նորվեգիան ամենաբարձրն է մարդկային զարգացման ցուցանիշներով, որից հետո գալիս է Շվեդիան:

«Հյուսիսային, ինչպես նաև առաջին 30 այլ երկրներում, բարեփոխիչները ստիպված չեն ընտրություն կատարել ձեռնարկատիրությամբ զբաղվելը հեշտացնելու և սոցիալական աջակցության տրամադրման միջև: Նրանք կարող են երկուսն էլ անել» - ասում է Սենյոն Դժանկովը՝ գեկույցի հեղինակներից մեկը:

«Doing Business» նախագիծը հիմնված է ավելի քան 3,500 տեղական փորձագետների վրա՝ գործարար խորհրդատուներ, իրավաբաններ, հաշվապահներ, կառավարության պաշտոնյաներ և առաջատար գիտնականներ ամբողջ աշխարհից, որոնք մեթոդաբանական աջակցություն և

ուսումնասիրություն են տրամադրում: Աջակիցների տվյալները,
մեթոդաբանությունը և անունները մատչելի են ինտերնետից:

###

Ինտերնետի հղումների կենտրոն՝

Նախքան արգելանքի ավարտը լրագրողները կարող են նյութի հետ
ծանոթանալ Համաշխարհային բանկի ինտերնետ հղումների կենտրոնում՝
<http://media.worldbank.org/secure/>.

Հավատարմագրված լրագրողները, որոնք դեռ գաղտնաբառ չունեն, կարող են
դիմել լրացնելով գրանցման ձևը հետևյալ հասցեով՝
<http://media.worldbank.org/>.

Անցյալ տարվա «*Doing Business in 2005*» զեկույցը և հետագա
տեղեկությունները մատչելի են՝
<http://www.doingbusiness.org>.

«*Doing Business in 2006*» լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք
կապվել՝

Նադինե Ղաննամ (202) 458-0482
Բջջային՝ (917) 517 0795, էլ-փոստ nsghannam@ifc.org

Կամ՝ Իրինա Լիխաչովա (202) 473-1813
Բջջային՝ (202) 247-7231, էլ-փոստ ilikhachova@ifc.org